# Վարպետի տունը

Հոգեւոր արժեքներ



ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի տնօրեն

**- Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանը Գյումրիում եւ այստեղ:**

- Այո, Գյումրիում էլ կա տուն-թանգարան, դա հայրական տունն է, որտեղ ծնվել է Իսահակյանը ու ապրել իր մանկությունը. այս մասին նա շատ ջերմ ու պայծառ հիշողություններ ունի: Իսկ երեւանյան տուն-թանգարանն այն տունն է, որտեղ ապրել է վարպետն իր կյանքի վերջին տասը տարիները: Այս տունը, իմիջիայլոց, կառավարության նվերն է եղել Իսահակյանին:

**- Ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ կառավարությունն առանձնահատուկ վերաբերմունք է ցույց տվել Իսահակյանին:**

- Ես շատ ուրախ եմ, որ դա նկատում եք, իրոք, այդ վերաբերմունքն առանձնահատուկ է, որովհետեւ հայ մշակույթի անվանի մարդկանց համար կառուցված հինգ առանձնատներից մեկը կառուցվել է հենց Իսահակյանի համար:

Իսահակյանի վերադարձը մեծ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի համար: Վարպետը վերադարձավ 37-38 թվականներին՝ իմանալով, թե ինչ կարող է իր հետ կատարվել, ինչ ճակատագիր կարող է ունենալ: Հետո Վարպետի թոռը՝ Ավիկ Իսահակյանը, իր հուշերում, ասում է, որ նա հենց դա գիտակցելով է եկել եւ իմացել է իր գալու կարեւորությունն իր ազգի համար:

**- Եվ փաստորեն չի սխալվել:**

- Իսկապես չի սխալվել. նրա վերադարձը հոգեւոր մեծ լիցք է տվել մարդկանց: Նույնիսկ պատմում են, որ երբ փողոցով անցնում էր՝ ձեռնափայտը ձեռքին, եվրոպացու արտաքինով, մեծ ուշադրության էր արժանանում: Բանաստեղծին միշտ ցանկանում էին մոտենալ, զրուցել... Վերանալով բարձրագոչ արտահայտություններից՝ նշեմ, որ այս թանգարանում աշխատողներից յուրաքանչյուրը մեծ հպարտության զգացում ունի եւ գիտակցում է, որ ամեն օր բացում է այն դուռը, որը բացել է նաեւ Իսահակյանը եւ աշխատում է այնտեղ, որտեղ միշտ կա Իսահակյանի ոգին ու շունչը:

**- Թանգարանի ներկա վիճակը եւ թանգարանի մատյանը դա էլ ապացուցում է:**

- Իսկապես, սրտից բխած խոսքեր են գրված, կարդում ես եւ հուզվում. այս տողերն ասում են, որ թանգարանն իր նպատակին է ծառայում, եւ դա մեծ հոգեկան բավարարվածություն է բերում: Վերջերս նաեւ մի մատյան առանձնացվեց, որն իր մեջ պահում է նշանավոր մարդկանց ձեռագրով գրված խոսքեր, մարդկանց, որոնք նաեւ շփվել են նրա հետ իր կենդանության օրոք: Հուշամատյանում արդեն գրառումներ են արել Սիլվա Կապուտիկյանը, Նիկողայոս Նիկողոսյանը

**Աբու Լալա Մահարին, կյանքի ու մահվան մասին շատ ստեղծագործություններ: Ինչի՞ց էր դա գալիս:**

- Իրոք, հետաքրքիր է, նույնիսկ նրա «Հիշատակարանում», որտեղ 17-18 տարեկանի գրառումներ կան, արդեն կյանքի ու մահվան փիլիսոփայական խորհրդածություններ են շարադրված: Բայց իրականում նա շատ կենսախինդ էր՝ գյումրեցուն հատուկ սուր հումորով, սակայն հոգում խոհափիլիսոփայական հենքը միշտ եղել է:

**- Երեւի պատահական չէ, որ շատ երգեր են գրվել Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա, եւ այդ երգերը ժողովրդական են դարձել:**

- Նրա բանաստեղծությունն արդեն իր մեղեդին ունի, տողերի տակ երաժշտություն կա:

Մի անգամ, հայկական գյուղերից մեկում շրջելիս, Իսահակյանը լսում է, թե ինչպես մի գյուղացի երգում է «Մանկալ ես, բեզարած ես» երգը, մոտենում է ու հարցնում, թե ինչ երգ է երգում, գյուղացին ասում է. «Քո խելքի բանը չէ, դու չես հասկանա»: Իսահակյանն իրոք ժողովրդի կողմից սիրված էր:

**- Ժողովուրդն Իսահակյանին, իհարկե, սիրում է ու գնահատում ըստ արժանվույն, բայց դրա հետ մեկտեղ ասում են, որ...**

- Այո, ասում էին, որ գնացել է հայրենիքից, նույնիսկ զուգահեռներ էին անցկացնում՝ ասելով, որ այդ ժամանակ Թումանյանն այստեղ որբերի հետ էր աշխատում, իսկ Իսահակյանը հայրենիքից դուրս էր: Բայց դա թեթեւ մոտեցում է: Նա ճակատագրի բերումով է հայտնվել արտասահմանում եւ մեծ ցավ է ապրել ու վիշտ, որ հայրենիքից հեռու է, սակայն իրականում նա հոգով-սրտով այստեղ է եղել:

**- Իսկ ինչպիսի՞ն էր նա՝ որպես մարդ:**

- Կյանքը շատ է սիրել, սիրել է խնջույքներ: Բայց շատ է վախեցել մահից: Նրա ընտանիքի անդամները նշում են, որ նա ուրախ մարդ էր եւ երազել է հանգիստ մահվան մասին, եւ Աստված այդպիսի մահ էլ տվել է: 82 տարեկան հասակում, նոյեմբերի 17-ի առավոտյան նա չարթնացավ:

**- Վիգենն Իսահակյանը գրել է «Հայրս» գիրքը. ի՞նչ կասեք այդ գրքի մասին:**

- Շատ անմոռանալի գիրք էր ինձ համար: Կարծում եմ՝ որդու կողմից հոր մասին գրված գիրքը մեծ արժեք է: Հոր կյանքը Վիգենն ամենայն մանրամասնություններով է նկարագրել:

հայ:

**- Շատ է խոսվում Դեմիրճյանի եւ Իսահակյանի ընկերության մասին:**

- Ճիշտ է, նրանք շատ մտերիմ ընկերներ են եղել, եւ երբ Դեմիրճյանը մահացավ, նա միանգամից շատ խեղճացավ, դա շատ ծանր հարված էր նրա համար: Նույնիսկ տարիներ անց, լուսանկարին նայելիս, զգում ես Իսահակյանի վիշտը:

**- Նրա առաջին սերը՝ Շուշանիկը, եղավ Իսահակյանի սիրո երգերի ներշնչողը, ոգին, բայց իր կյանքի վերջին օրերին նրա հոգուց ծնվեց մի բանաստեղծություն, որը, ասում են, նվիրված էր իր կնոջը՝ Սոֆիին:**

- Այո, այդ բանաստեղծությունը գրվեց նրա մահվան նախորդ գիշերը՝ Սոֆիի ձեռքով: Սոֆին, Իսահակյանի կյանքի ընկերը լինելով, ամեն կերպ ձգտել է նրան ազատել ավելորդ կենցաղային հոգսերից ու ստեղծել հոգեւոր, ներդաշնակ մթնոլորտ՝ ստեղծագործելու համար:

*Ինչ սիրեիր, որպես թե*
*Լինեի մեռած.*
*Անունս հիշեր քեզ՝*
*Հեռավոր մի հուշ,*
*Ինչ տեսնեիր երազիդ մեջ՝*
*Դալուկ ու տխուր,*
*Ինչ կանչեիր, բայց գնայի*
*Ինչպես ուրու, հեռու...*
*Երբ լսեիր իմ երգը՝*
*Սրտիցս բխած,*
*Թախծեիր, լացեիր*
*Սերդ մեռած...*

## Հուշեր

Իսահակյանը մի հարեւան ուներ՝ վարպետ Հարությունը, կոշկակար էր եւ շատ ջերմորեն էր խոսում նրա մասին. նա՝ նշում էր, որ Վարպետը շատ կամեցող էր, առատաձեռն, բարի՝ նաեւ տան դուռը թակող մուրացկանների նկատմամբ:

Պատմում էր, որ այն ժամանակ ֆինբաժնի ստուգումներ էր կատարվում եւ երբ դա սկսվում էր, գործիքներով ճամպրուկը թաքուն բերում էր Իսահակյանի տուն,. իհարկե, նրա առաջարկով:

Հարեւանը պատմում էր, որ երկուսի բակում էլ թթենի կար, եւ մի անգամ նկատում է, որ Իսահակյանը ձեռնափայտով իջեցրել է իր բակի թթենու ճյուղը եւ թութ է ուտում: Հարցնում է, թե ինչու նա իր բակի թթենին թողած, հարեւանինն է ուտում: Իսահակյանը պատասխանում է՝ չգիտե՞ս, որ գողա-